

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՅԵՐ» ԱՐՄԱՆԴՐԻ

№ 15

Բ Բ Ե Տ Հ Ա Ր Տ .

Մ Լ Ւ Ս

Թարգմ. Ստ. Ղիսիցեան

=====

Թ Ի Ձ Լ Ի Ս

Աշուր Տուրսուն օր. Ն. Ալվանեան ՊՈԼԻՑ. 7

1910

825

F - 99

ՀՅԱՅԱ Ե
NOV 2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՍԿԵՐ» ԱՐԴՐԴՐԻ

820.
Բ-999

ար

№ 15

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՍԿԵՐ» ԱՐԴՐԴՐԻ
7/XI-1922
Ապօհնութեան և Խաղաղութեան ամսագիր ԱՄԵՐԻԿԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱՅԱԿԱՆ ԱՐԴՐԴՐԻ

Մ Լ Ի Մ

00
00
00
00
00

Թարգմ. Ստ. Ղիսկեան



Թ Ի Ֆ Լ Ի Մ

ԵԼԵՔՏՐԱԿԱՐ ՏՊ. ՕՐ. Ա. ԱՐԱՆԵԱՆՑԻ, ՊՈԼԻՑ. 7,
1910

6 MAR 2013

495

բառությամբ աշխի քրայ վիճճար ցամ չ պահ
բազմություն ունեցած լուսական օգնությունների

առև վիճակը մենք ա գնացն զարդ բանի չ
առև մաս մասի խիմիում ողջամտ լուսական
ըստ վարչություններ սեղան ցամն Ա ու մասնակի
Մ Լ Ի Ս

ՀՀնցայն տեղը, ուր Սիերա Նետան*) սկը որ
սում է փոխւել լայնանիստ լանջերի, ուր գեղաց
տերը (աւելի դանդաղ ու յստակ են վազում, մեծ
կարմիր Սարի ստորոտում բազմել է Սմիտի Գըր-
պան գաղութը:

Այդ գաղութի ծագումն ու անունը կապւած
է մի ոմն Սմիտի հետ, որն այստեղ մի կէս ժա-
մւայ մէջ և առանց առանձին ջանքի ձեռք էր
բերել երեք հաղար դօլար**) արժողութեամբ
ոսկի, Այդ փողը նա իր ընկերակիցների հետ
դործ դրաւ ոսկեզարիչ շինելու վրա, բայց դրա-
նից նա ոչ մի շահ չունեցաւ, և միայն զրկւեց
եր բոլոր փողերից:

Այն ժամանակ Սմիտը ձեռնամուխ եղաւ

*) Կեռնաշղթայ Կալիֆորնիայում (Հիւսիսային Ա-
մերիկա.) շատ ոսկի է գտնուում այդ շղթայի մէջ:

**) Դօլարը մօտ 2 ռ.

նոր և նոր գործերի, բայց միշտ անաջող, ու
վերջի վերջոյ կոտրւեց:

Մէկ էլ լուր տարածւեց թէ Սմիտը սկսել
է խմել: Այդ լուրը ճշտւեց, և մի յայտնի ժա-
մանակից յետոյ շատերը նոյնիսկ եկան այն հա-
մոզման, որ Սմիտը երբէք հարբելուց աւելի ու-
րիշ գործ չի ունեցել:

Սմիտի բախտի այս փոփոխութիւնը «Սմի-
տի գրպան» գաղութի կեանքի վրա ոչ մի ազ-
դեցութիւն չունեցաւ, և գաղութը զարգացաւ ու
դարձաւ մի գիւղ մօդայի երկու խանութներով,
երկու հիւրանոցներով, երկու առաջնակարգ տը-
ներով հիւղերի փոխարէն, մեթոդիստական*) եւ-
կեղեցով և նրա կողքին բանկով, իսկամի քիչ չ
հեռու, սարի լանջին, տեղաւորւեց փոքրիկ դրախ-
րոցը:

Այդ դպրոցի ուսուցիչը մի՛ օղանմտած էր ։
իր փոքրիկ դպրոցական տան մէջ, ու աշակերտա-
կան տետրերի կոյտի առջև, սրբագրում էր առաջ-
շակերտների և աշակերտունիների շարադրու-

*) Սա անգլիական եկեղեցու մի աղանդ, է, որ
հիմնել է 1729 թւին. մեթօդիստները նպատակ են
դրել ապրել աւետարանի ցուցմունքների համեմատ
(պահեցողութեամբ, աղօթքով, բարի գործերով) մի յայտ-
նի եղանակով, մեթոդով, որի պատճառով և ստացել
են իրենց անունը (մեթոդ նշանակում է որոշ եղա-
նակ, ձև):

թիւնները: Նա այնպէս խորասուզւել էր իր պահա-
բապմունքի մէջ, որ չըլսեց էլ՝ ինչպէս դուռը
կամացուկ բախտցին:

Մի երկու րոպէ անցաւ, և բախտւնը կրկնեց, և
և դրանից յետոյ դուռը բացւեց: Ուսուցիչը գը-
լուկը բարձրացրեց և ցնցւեց, տեսնելով միայ
կեղտոտ, ցնցոտիներ հաղին աղջիկ: Սակայն նրա
մուգ աչքերը, գգգգւած մազերը, որ թափում
էին արևառ գէմքի վրա, կարմիր ձեռներն ու
կարմիր կաւի մէջ ցեխուտած ոտները նրան յաւա-
ծանօթ էին: Դա Մլիս Սմիտն էր, Սմիտի աղջ-
իկը, որը վաղուց զրկւել էր մօրից:

«Ինչ է կամենում», — մտածեց ուսուցիչը:

Մլիսին ճանաչում էին ամենք, կարմիր Սա-
րի բոլոր պուճախիներում: Աղջկայ անզուսպ բնա-
ւորութիւնը, անմիտ վարմունքը, կոպիտ, քմա-
հաճ յամառութիւնը նոյնչափ լաւ էին յայտ-
նի ամենքին, որչափ և հօր հարբեցողութիւնը, նա
հայիոյանքներ էր թափում և յարձակում էր ա-
շակերտների վրա ու կուի մէջ կատաղի յանդ-
գնութիւն և գրեթէ անյաղթ ուժ էր ցոյց տա-
լիս: Նա թափառում էր անտառներում որսկան
շան անխոնջութեամբ և ուսուցիչը շատ անգամ
տեսել էր նրան ոտաքորիկ, գլխաբաց, գաղու-
թից դուրս մի քանի մղոն հեռու:

Գետի ափին ապրող ոսկեհանները կերպ-
ում էին «շրջմոլիկ Մլիսին» (այսպէս էին նը-

բան կոչում) և ապաստան տալիս Բայց ամենից ջերմ վերաբերմունք ցոյց տւաւ նրան տեղական միսիօնար (քարոզիչ քահանայ) Մակ-Սնալէյը՝ նատեղաւորեց աղջկան տեղական հիւրանոցներից մէկում որպէս աղախին և գրեց կիրակնօրեայ դպրոցի աշակերտների թւում: Բայց Մլիսը ինչ որ նկատողութեան պատճառով ափսէ շպրտեց հիւրանոցի տիրոջ գլխին և յաճախորդներից մէկի երեսին բռունցքով զարնեց, իսկ կիրակնօրեայ դպրոցում իր կեղտու կերպարանքով այնպէս աչքի էր Ընկնում ուրիշ, միշտ մաքուր հագնւած երեխաների մէջ, որ վերջիններիս ծնողները վրդովւում էին Մլիսի ներկայութիւնից իրենց երեխաների շրջանում և հարկադրեցին միսիօնարին խայտառակութեամբ առնել նրան դպրոցից:

Այդպէս էր Մլիսը, որը այժմ կանգնած էր ուսուցչի առջե:

Ես եկայ, —խօսեց նա արագարագու հաւամարձակ, —որովհետև գիտէի որ զուք մենակ էք, այս ես չէի ուզում գալ, երբ այստեղ այն պարանից վախտածներն են լինում. ես նրանց ատելով ատում եմ, նրանք էլ ինձ, Դուք էք դպրոցը պահում: Ես սովորել եմ ուզում:

Ուսուցիչը զնող հայեացքով նայեց աղջկան, իսկ նա մի ձեռքով դռան եղրը բռնած և աչքը բարձրաց անդամար, պատասխանեց աղջիկը, որ Մակ-Սնալէյը ասաւ, որ ես լաւ չեմ դպրոցի

չը հեռացնելով պարոնից, ամեն մի խօսք կտրուկ շեշտելով շարունակեց. — Ինձ ասում են Մլիս, Մլիս Սմիտ հմհայրս է երունի Սմիտը: Ծոյլ, անդամալոյժ Սմիտը՝ ահա միայն ինչ կարելի է ասել նրա մասին: Եւսես եկել եմ առվորելու: Բարի ես եկել, ճանդիստ պատասխանեց ուսուցիչը:

Ընտելացած լինելով որ իրեն միշտ կոպտաբար մերժեն, ինչ էլ որ ինդրելիս զինէր, աղջիկը ապշած էր ուսուցչի տւած համաձայնութեան վրա, որ յայտնել էր մեղմ և սրտաբուղիս կերպով: Նա կանգ առաւ, մագերի հիւսը մատների մէջ խաղացնելով, և վերին շրթունքը, որ առաջ էր ձգուած չարութեամբ սղմած ատամերի վրայից, հազիւնկատելի կերպով զողաց: Աչքերը խոնարհեց, և կարմրութեան պէս մի բան երեսաց թշերի վրա այրւածքի ու կեղտի տակից: Նա յանկարծ առաջ ցնցւեց, բարձր ճշաց և երեսի վրա ընկնելով սեղանին՝ անզուպապ հեկեկաց: Ուսուցիչը քնքութեամբ ճեղքը նրա ուսին զըրած՝ սպասում էր որ լացի բռնկումը անցնի: Եւ երբ նա հանգստացաւ նա հարցրեց: Ինչու գաղարեցիք կիրակնօրեայ դպրոց յաճախելուց: Ծոյլ անզու մշտական աղջիկը, նրա համար, պատասխանեց աղջիկը, որ Մակ-Սնալէյը ասաւ, որ ես լաւ չեմ դպրոցի

համար և որ ամենքը ինձ ատում են. իսկ ես չեմ կամենում ոչոքի շլինքին փաթաթւել, ով որ ինձ ատում է, ես շատերին դուր չեմ գալիս, և շատերը ինձ ատում են: Երբ ես անցնում եմ, մարդիկ մատով ինձ վրա են ցոյց տալիս և առում. «Ահա ծոյլ, անդամալոյձ Միտի Մլիսը»: Եւ նա նորից սկսեց հեկեկալ, ընկնելով աթոռի վրա:

Ուսուցիչը՝ գլխին կռացած, միտիթարում էր նրան և յետոյ, ոտքի կանգնեցնելով, փաթաթեց իր պլէդի (մեծ շալ) մէջ ու պատւիրելով որ առաւտեան վաղ գայ, մինչև ճամփան ուղեկցեց: Այսեղ նա մնաս բարով ասաւ Մլիսին: Ուսուցիչը պայծառ լուսաւորում էր: Ուսուցիչը կանգնել նայում էր, ինչպէս փոքրիկ կերպարանքը սեին էր տալիս ճամփի վրա. սպասեց, մինչև որ նա անցաւ հարեան զերեզմանատան միջով և հասաւ բլրի գագաթին, ուր շուռ, եկաւ և մի բոպէ կանգ առաւ: —Խեղճ, տանջւած արարած, —հառաչեց ուսուցիչը և տուն վերադարձաւ:

Բայց աշխատել նա այլևս չէր կարողանում: Կեղտոտ, գզզուած շորերը հագին, ոտներն արիւնոտած աղջկայ պատկերը շարունակ կանգնած էր նրա աչքի առջև կարծես կենդանի: Նա ժողովեց աշակերտական տեսրակները, դուռը կողակեց ու պատկեց քննելու:

—այդու ով մզմուխադա՞լլա իշմաղմացա ճառան և ծառայած մասը ով ու ճարման ով թիւ և առայր

Միւս առաւօտ Մլիսը եկաւ դպրոհցաւ երեսը լւացել էր, մազերը մի կերպ սանրել:

Աշակերտներին ու աշակերտուհիներին վերաբերում էր անվատահովթեամբ. իրեն թւում էր թէ իրեն նայում են ծաղրանքով և չարակամութեամբ, բայց ուսուցչի առջև իրեն զսպում էր: Իսկ առանց նրան, դասամիջոցներին, կատաղում էր երևակայած վիրաւորանքից, և բանը այն տեղն էր հասնում, որ աշակերտներն ու աշակերտուհիները որոնում էին ուսուցչին և ցոյց էին տալիս նրան իրենց չանգուած դէմքերն և պատառտած շորերը և անվերջ գանգատւում էին անտանելի Մլիսից:

Այդ առիթով բնակիչները բաժանւեցին երկու կուսակցութեան, մի քանիսը սպառնում էին վերցնել իրենց զաւակներին դպրոցից այդ վատ ընկերութիւնից նրանց փրկելուն համար, միւսները ջերմ համակրում էին ուսուցչի ջանքերին Մլիսին ուղղելու:

Գտնւեցին բարի մարդիկ, որոնք իրենց մէջ փող ժողովեցին և այնքան գումար գոյացաւ, որ պատառտած Մլիսը կարողացաւ աւելի մաքուր շոր և ոտնաման հագնելու ժամանակ ուղարկելու:

Այդպէս անցաւ երեք ամիս, ուշ ուսուցիչը կրկն

նստած, աշակերտներէ տետրակներն էր սրբազրում, մէկ էլ յանկարծ լսեց դռան բախում, և նրա առջենորից երկաց Մլիսը:

Նա մաքուր լւացւած էր, խնամքով հաղուած լուս միտքանի, բացի ու մազերից և պապղուն աւաչը երից, չէր յիշեցնում անցեալրւագ — իուք զբաղութէ էք, — հարցը եց նաև Կաչէ ընդ էք ինձ հետ գալ: Երբ ուսուցիչը իր պատրաստակամուսք թիւնը յայտնեց նա ասաւաիր սովորական, հրամայական եղանակով: Յու նաև սահ ոչ ճրծա թւա

— Որ այդպէս է, շուտով գնանք: Առաջնային գուրմելան և գնացին մութ ճամփով երբ գերեզմանատունն և բլուրն անցան ուստան տրների շարքերը, ուսուցիչը հարցը եց: — Բայց ուր ենք գնում:

— Հօրս որդինելու, — պատասխանեց Մլիսը: Առաջին անգամն էր, որ ուսուցիչը լսում էր՝ ինչպէս հօրը հայր էր անւանում: Մինչ այդ միշտ անւանում էր նրան կամ Ծերունի Սմիտ, կամ պարզ «ծերունի»: Առհասարակ առաջին անգամն էր այդ երեք պատւայ մէջ, որ աղջիկը ինքը խօսք էր բաց անում հօր մասին, և ուսուցիչը գիտէր, որ նա միշտ խոյս էր տալիս հօրը պատահելուց, որը շարունակ հարթած էր լինում: Լաւ իր մանում էր որ զուրէ հարցնել Մլիսին նրա մժադրութեան մասին, ուստի լուռ հետեւմ էր աղջիան:

Այս ասիօ որ չը առարաւ Մլիսը ուսուցչին: Թէ գետնափոր գինեաները, թէ պանդոկների կեղտութ ճաշարանները, թէ թղթախաղի աները...

Անթափանց ծխի մէջ, հարբած աղանակներից խլացած, աղջիկը ուսուցչի ձեռքից բռած կանգ էր առնում և անհանգիստ նայում էր յաճախորդների երեսներին, որոնելով սճօքը:

Այսպէս անցաւ մի ամբողջ ժամ Վերջապէս աղջիկը ասաւ ուսուցչին որ գետի միւս ափին կամ մի խրճիթ ուր հաւանական էսպիտի լինի իր հայրը: Եւ գնացին այն կողմը գնում էին երկար, բայց այնտեղ էլ ծերունի Սմիտը չըկար ու չըկար: Եթք ետ էին դառնում, յանկարծ գիշերւայ թարմ օդի մէջ լաւ եց ատրճանակի տրաքոցի առւր ձայնը և անցաւ արձագանք տւաւ կարմիր Սարի շուրջը:

Ամբողջ գետի երկարութեամբ շներ հաշեցին, Գիւղի ծայրին արագ պսպղացին վախեցած բնակիչների ճրագները և այնուհեաւ տիրեց ծանր լոռութիւն:

Ուսուցիչը գարձաւ դէպի Մլիսը, բայց աղջիկը արդէն նրա կողըին չէր. ուրոր անհետացել էր: Մի տարօրինակ երկիւղ պատեց նրան. շտապեց ցած գէպի գետը, ոկտեց անցնել ճանձաղ տեղով, քարից քար ցատկելով, և վազէվազ հասաւ կարմիր Սարի սառըտին, գիւղի հէնց ծայրին: Գրեթէ սարի գագաթին վայլիլում էին հաւաքւած ամբոխի անհանգիստ ճրագները:

Արագ քայլերով, ծանր շունչ քաշելով,
ուսուցիչը վաղելով վերելաւ ու կանգնեց:
Ամբոխի միջից իսկոյն առանձնացաւ և մօ-
տեցաւ մի աղջկկ և ըսնելով նրա ձեռքը՝ անխօս
մօտեցրեց սարի մէջ հղած խորը խորշին:
Աղջկայ դէմքը գունատ էր: Նման էր մի մար-
դու, որին այս է մի սոսկալի բան է պատա-
հել, բայց մի բան, որ ինքը սպասելիս է եղել
և անախատեսնելիս:
Աղջիկը ցոյց տւաւ մի կոյտ ցնցոտիների
վրան սրանց վրա պառկած էր մի մարդարձանակը
ձեռքին: — Իմ հայրն է, — տաւ Միլոր. — ինքն
իրան սպանեց: Պայտ վիճանածուաց այս զի զի
անդաշ վցան, դիման աւան զնաքանչա աբաւ
միցաւ դժման վնամի ուղի լուս կուժ կրողն. Ո
նաբախ միքարբաս բայս ավան ավան
ըմյժա եկաւ երկար ու չոր ամառը: Մմիախ գե-
րեզմանի վրա կանաչ խոտը թառամեց և չորա-
ցաւ, բայց ուսուցիչը, շրջելով ազատ ժամերին
դպրոցից ոչ հեռու գտնւող գերեզմանատանը՝
գարմանում էր, գտնելով այդ գերեզմանի վրա
երբեմն թարմ ծաղիկների փունջ, երբեմն էլ
պսակներ՝ փոքրիկ չամէ խաչի վրայից կախ արած:
Պատկները մեծ մասամբ լինում էին խոտից,
մէջէմէջ խառն որևէ թունաւոր ծաղիկներ, առ-
փորաբար, ընձախոտ կամ բանգ:

— Այս ով պիտի զարդարելիս լինի գերեզ-
մանը, — տարակուսում էր ուսուցիչը:
Եւ ահա մէկ անգամ զբօնելիս, նա մտել
էր անտառի խորքը և անսպասելի կերպով պա-
տահեց Միսին: Փոթուկից տապալւած եղենու
բնի վրա նստած երգում էր նեգրական մի երգ
և փէշի մէջ հաւաքած խոտերից պատկ էր հիւ-
սում: Քաղած խոտերի մէջ ահագին քանակու-
թեամբ երկում էին ընձախոտ և բանգի ծա-
ղիկներ:
Ուսուցիչը ձայն տւաւ: Աղջիկը գլուխը
ըարձրացրեց և ճանաչելով ուսուցչին, ողջունեց
ու հաւիրեց նստել: Ուսուցիչը նստեց և օգտւե-
լով հանգամանքից, բացատրեց որ ընձախոտն ու
բանգը թունաւոր են, և աղջկանից խօսք առաւ,
որ այլն երբէք չի հաւաքի այդ ծաղիկները:
Ին ճան Արդէն առաջ էլ փորձած էր նրա ազնուու-
թիւնն ու հաստատամտութիւնը և գիտէր որ
կարելի է հաւատալ նրա խօսքին:
Միլոր վատ չէր սովորում և նրա ցաւագար
զարգացած ինքնասիրութիւնը գոհացում էր
ստանում նրանից, որ ուսուցիչը առանձնապէս
ըարեմիտ էր դէպի ինքը: Իսկ եթէ նկատում
էր, որ ուսուցիչը որկէ աշակերտին կամ աշա-
կերտուհուն վերաբերում է աւելի մեծ ուշա-
զբութեամբ, քան թէ իրեն, այդ նրան չարա-
ցնում և կատաղեցնում էր:

Դպրոցի աշակերտուհիների մէջ կաը մէկը,
որի անունն էր Կլիտի Մօրֆէր. նա գիւղի հա-
րուստ ընտանիքից էր և այդ պատճառով իրեն
հզարտ էր պահում, բայց ուսուցիչը նրա և ու-
րիշների մէջ ոչ մի խտրութիւն չէր գնում և
աշխատում էր նրա վրա առանձին ուշադրու-
թիւն չը դարձնել:

Մի օր երեկոյեան դէմ Կլիտին վերադար-
ձել էր դպրոց մոռացած գիրքը վերցնելու։ Քա-
նի որ ուշ էր, ուսուցիչը կարեոր համարեց
ճամփայ ձգել նրան մինչև տուն։ Այդ բանի մա-
սին իմացաւ Մլիսը և յաջորդ օրը դպրոց չե-
կաւ։ Նրան որոնեցին, բայց ոչ մի տեղ գտնել
չը կարողացան, իսկ երբ երեկոյեան երկար զուր
որոնումներից յետոյ ուսուցիչը վերադարձաւ
դպրոցական տունն ու լամպը վառեց, իր սե-
ղանի վրա գտաւ Մլիսի ձեռքով գրած մի
տոմսակ։

«Յարգելի ուսուցիչ։ Երբ դուք այս տողե-
րը կարդալիս կը լինէք, ես փախչելիս կը լինիմ։
Ես երբէք չեմ վերադառնալու։ Երթէք, երթէք,
երթէք։ Կարող էք իմ համրիչը տալ ների
ջէնիքսին, իսկ իմ «Ամերիկայի հպարտութիւ-
նը» (ծխախոտի արկղի վրայից պոկւած իւղա-
ներկ պատկերը) Սալի Ֆլենդերսին։ Բայց ոչ մի
բան չը տաք կլիտի Մօրֆերսին։ Զը համարձակ-
ւէք։ Գիտէք՝ ինչ եմ ես նրա մասին մտածում։ Ահա

թէ ինչ, նա անպիտան, չար աղջիկ է։ Այս
եմ ասում ես։ Մլիս Մլիտ։

Ուսուցիչը սկսեց մտածել այս տարօրինակ
նամակի բովանդակութեան մասին, մինչև որ
լուսինը երեաց հեռաւոր բլուրների վրա և լու-
սաւորեց դէպի դպրոցը տանող շաւիղը։ Յետոյ,
ինչ որ իրեն հանգստացնող եղրափակութեանը
դալով, պատառոտեց տոմսակը ու մանր կտոր-
ները թափթփեց յատակի վրա։

Յաջորդ օրը լուսադէմին նա անցնում էր
արմաւենանման ծառխոտերի և մասրիների մի-
ջով, իր երեալով փախցնելով չամի անտառի մօտ
դուրս եկած նապաստակներին։ Այսպիսով նա
եկաւ այն տեղը, ուր մի օր տեսել էր Մլիսին
տապալած եղենու վրա նստած պսակ հիւ-
սելիս։

Եղենին տեղն էր, բայց նրա վրա մարդ
չը կար։ Սակայն, երբ աւելի մօտեցաւ, կախ ըն-
կած խիտ ճիւղերի տակին ինչ որ բան շարժւեց։
Ուսուցիչը ճիւղերը վեր բարձրացրեց ու տակը
նայեց։ Այստեղ տեսաւ Մլիսին։

— Ի՞նչ էք կամենում, — հարցրեց աղջիկը
կցկտուր կերպով։

— Վայրի ինձոր, — պատասխանեց նա հե-
ղութեամբ։

— Ինձոր չը կայ։ Հեռացէք, Գնացէք կլի-

տիկ մօտ, թող նա ձեզ խնձոր տայ... 0... 00.

Վատն էք...

— Ես սոված եմ, Մլիս, Երէկւանից բան
չեմ կերել: Ուտել եմ ուզում:

Մլիսի սիրտը շարժւեց: Մանկութիւնից լաւ
էր ծանօթ թէ ինչ բան է սովը, որից գանգատում
էր ուսուցիչը: Նրա ձայնի տխուր եղանակից
յաղթահարւած, աղջիկն ասաւ.

— Քրքրեցէք ծառի տակ, արմատների մօտ,
ու կը գտնէք. բայց տեսէք՝ ոչ ոքի ոչ մի
խօսք:

Մլիսը ծառի տակ ունէր մի ամբողջ մա-
ռան, սկիւռների ու մկների պէս: Բայց ուսու-
ցիչը չըկարողացաւ ոչինչ գտնել: Այն ժամանակ
Մլիսը դուրս եկաւ ճիւղերի տակից և հրամցրեց
ուսուցչին մի քանի ընկուզ և խնձոր:

— Հիմա աւելի լաւ էք, — հարցրեց նա մի
քիչ յետոյ:

Ուսուցիչը իր շնորհակալութիւնն յայտնեց
ու գնաց ետ: Ինչպէս որ սպասում էր, չէր հե-
ռացել մի քանի քայլ, որ աղջիկը իրեն ձայն
տւաւ:

Նա ետ նայեց: Մլիսը կանգնած էր բոլորո-
վին գունատւած, արտասուբը՝ լայն քացած աչ-
քերում: Ուսուցիչը զգաց որ հասել է ցանկա-
ցած բոպէն և մօտենալով նրան՝ ձեռքից բռնեց և
լուրջ արտասանեց.

— Մլիս, յիշում էք առաջին երեկոն, երբ
եկաք ինձ մօտ:

— Յիշում եմ:

— Դուք հարցրիք՝ կարող էք արդեօք դրպ-
րոց գալ, որովհետև ուզում էք մի բան սովո-
րել և աւելի լաւ դառնալ ես էլ ասի.. .

— «Կարող էք», ասացիք դուք, — ընդհատեց
նրան աղջիկը:


— Իսկ դուք ինչ կասէիք հիմա, եթէ ու-
սուցիչը գար ձեզ մօտ և ասէր որ ինքը տըխ-
րում է առանց իր փոքրիկ աշակերտուհու և ոք
խնդրում է նրան վերադառնայ:

Աղջիկը գլուխը կախ արած՝ լուսէր մնում:
Ուսուցիչը համբերութեամբ սպասում էր:

Լուսութիւնից գայթակղւած մի նապաստակ
դուրս վաղեց, իր փայլուն աչքերը վեր ցցեց,
առաջ ձգեց իր առջևի թաւոտ թաթերը, նստեց
և հարցական հայեացքով նայեց նրանց: Ակիւռը
ցած ցատկեց մինչև ընկած ծառի բնի կէս
տեղը ու կանգ առաւ:

— Ես սպասում եմ, Մլիս, — շշնջաց ու-
սուցիչը:

Աղջիկը ժպտաց: Քամուց ծառերի կատար-
ները տարութերեցին և լոյսի մի երկար շերտ,
իսկ ճիւղերի միջից ներս պրծնելով, պայծառ
լուսաւորեց աղջկայ դէմքն ու փոքրիկ կերպա-
րանքը: Մլիսը յանկարծ բռնեց միայն ձեռքը:



Թէ ինչ ասաւ նա, գրեթէ լսելի չէր, բայց
ուսուցիչը ժպտաց, ետ քաշեց նրան ճակատի
ու մաղերը և համբուրեց ճակատը:

Եւ ձեռք ձեռքի տւած նրանք դուքս եկան
եղնուածակից ու դիմեցին դէպի զպրոցը:

Բայց Մլիսը շարունակում էր թշնամական
զգացմունք տածել դէպի կիտին և ամեն յարմար
ըովէին չէր կարողանում իրեն զսպելու չը կչմտել
նրան: Այդ թշնամանքը նա անցկացրեց և իրեն
նւիրւած նոր տիկնիկի վրա: Տիկնիկը դմկլիկ ու
կարմրաթուշ էր, կապոյտ աչքերով, և ուսուցի-
չըն ասաւ թէ շատ է նման կիտին: Երեք Մլիսն
ինքն էլ նկատել էր այդ նմանութիւնը: Դրա հա-
մար էր որ նրա մեղրամումէ գլուխը զարկում էր
քարերին և յաճախթրե էր տալի գետնով վզիցը
մի պարան կապած, կամ մարմի մէջ քորոցներ
էր ցցում:

Չընայելով Մլիսի բնաւորութեան այս վատ
կողմերին, ուսուցիչը կարող չեր նկատել նրա
ուժեղ, սուր, արտասովոր խելքի տէր լինելը:
Նրա պատասխանները դասարանում միշտ հա-
մարձակ էին լինում, իսկ քննութեան միջոցին
նրա սրամիտ ու խելացի պատասխանները ընդ-
հանուր գովասանքի արժանացան: Բոլորն էլ
միշում էին նրա անցեալը և ուրախանում էին
նրա մէջ կատարած փափոխութեան վրա և
շնորհակալութիւն էին յայտնում ուսուցչին:

Անցաւ երկու աարի: Մլիսը մեծացաւ, բայց
դեռ շարունակում էր սովորել նրա յարաբերու-
թիւնները կիտի հետ չը լաւացան, և ուսու-
ցիչը տիսրութեամբ նկատում էր որ Մլիսը առաջ-
ւայ նման վրէժինդիր է, իրասածի, յանդուգն,
ու աշխատում էր այդ կողմից էլ դէպի լաւը
փոխել նրան:

IV.

Երկարատև անձրեային շրջանը մօտենում
էր իր վախճանին. գարունը գարթնեց լցւած բող-
բոշների ու փրփրալից լեռնային վտակների մէջ:
Անտառում ձիւթի հոտ էր բուրում: Ազալիանները
սկսել էին բացւել: Ամիտի գերեզմանի վրայի
թումբը ծածկւել էր թարմ զալարով: Գերեզմա-
նի խաչի վրա ամեն օր փոխւում էին Մլիսի
ձեռքով հիւսւած թարմ պսակները ձնծ աղիկներից
և մանուշակներից:

Քաղաքում լուրեր էին պտտում թէ շուտով
գալու է մի հոչակաւոր դրամատիքական խումբ:
Այդ լուրերը շատ հետաքըրբեցին տեղական երի-
տապարզութեանը: Դպրոցում էլ բոլորը սպասում
էին ներկայացումների սկսելուն: Ուսուցիչը
խոստացաւ Մլիսին, որը դեռ երբէք մի այդպիսի
բան չէր տեսել, տանել նրան թատրոն և հէնց
առաջին ներկայացմանը իր խօսքը կատարեց:

Պիեսի դերակատարութիւնը բաւականի թոյլ
էր, բայց ուսուցիչը, ներկայացման միջոցին
պատահաբար Մլիսին նայելով, նկատեց զարման-
քով որ այդ թոյլ խաղը ցնցիչ տպաւորսւթիւն
էր գործում այդ կենդանի և դիւրազգաց բնա-
ւորութեան վրա:

Թշերը այրւում էին, վոքրիկ բերանը մի
քիչ բաց էր, և ամբողջովին տենդօրէն շնչում
էր. սև յօնքերը վեր էին քաշւել, երկար թեր-
թերունքները դողում էին լայն բաց արած աշ-
քերի վրայից:

Երբ ներկայացումը վերջացաւ և փոքրիկ
բեմը ծածկւեց կանաչ վարագոյրով, Մլիսը խոր
և ծանր շունչ քաշեց և ուսուցչի կողմը դար-
ձնելով իր լուրջ երեսը ասաւ կոտրւած ձայ-
նով. «Դեհ, հիմա ժամանակ է. տուն գնալու»:
Եւ ծածկեց իրա սև աչքերը կարծես նրա համար,
որ մտքով նորից ապրի այն երևակայական
աշխարհում, որից իրեն բաժանել էր կանաչ
վարագոյրը:

Մի երեք օրից յետոյ Մլիսը դպրոց չեկաւ:
Դասերի վերջանալուց յետոյ, երբ ուսուցիչը
գրքերը հաւաքել ուզում էր գնալ նրա մօտ եկաւ
այն կնոջ տղան, որի տանը ապրում էր Մլիսը,
և ասաւ:

— Պարոն ուսուցիչ, գիտէք, ես կարծում
եմ որ Մլիսը նորից փախել է:

— Ի-ինչ, — չը հաւատալով ականջներին
հարցրեց ուսուցիչը:

— Ճշմարիտ... Տանը չէ, իսկ ես տեսայ
ինչպէս խօսում էր եկած դերասաններից մէկի
հետ. երեկի հիմա էլ նրանց հետ է... Եւ էլի գի-
տէք ինչ, պարոն ուսուցիչ, երէկ նա ինքը ինձ
ասաւ, որ կարող է առաջին դերասանուհուց ոչ
պակաս ներկայացնել, և սկսեց ներկայացնել:
Խօսում էր, խօսում...

— Ո՞ր դերասանի հետ էր,— հարցրեց ու-
սուցիչը:

— Նրա հետ, որը այնպիսի փայլուն գլխարկ
ունի: Ասում են, նա է դերասանների գլխաւորը:

— Ո՞րտեղ նրանց տեսարք:

— Արկադի մօտ:
Ուսուցիչը փայտն ու ձեռնոցներն առաւ
ու գնաց դէպի Արկադը: Սա մի երկարաւուն
շինութիւն էր, որտեղ գտնուում էին ճաշարան,
կեգելներ և բիլիարդ: Այստեղ կարծում էր նա
պիտի լինէր Մլիսը, որը անշուշտ վճռել էր փախ-
չել դերասանների հետ և դերասանուհի դառնալ:

Անցաւ ճաշարանով, կեգելների սենեակով
և մտաւ բիլիարդատուն: Ամեն տեղ դերասան-
դերասանուհիներ էին, որոնք ճաշում էին կամ
կեգել էին խաղում, բայց աղջիկը ոչ մի տեղ
չէր երեսում: Բիլիարդատանը բիլարդ էր խաղում
պապուն գլխարկ դրած պարոնը: Ուսուցիչը իս-

կոյն ճանաչեց որ դա է խմբի կառավարիչը, և
մօտեցաւ նրան:

— Ինձ ասացին, — դիմեց նա, — որ իմ գորո-
շիս աշակերտունի որբ Մլիս Սմիտը պայման է
կապել ձեզ հետ, ձեր խմբի մէջ մանելու: Ճիշտ
է այդ:

Նա առանց խաղը դադարեցնելու, արտա-
սանեց.

— Ասենք այդպէս է, յետով ի՞նչ...

Ուսուցիչը ձեռնօցը հազած ձեռքով յենւեց
բիլիարդին և շարունակեց.

— Եթէ դուք օրինաւոր մարդ էք, ես ձեզ
կանեմ միայն որ նրա խնամակալն եմ և նրա
ապագայի համար պատպախանատու: Դուք կա-
րող էք հարց ու փորձ անել և իմանալ որ ես
կարողացայ փրկել նրան փողոցում ձգա աղջկայ
վիճակից: Ես պարտականութիւնս եմ համա-
րում հիմա էլ ետ պահել նրան դերասանների
թափառաշրջիկ կեանքից: Նա ոչ հայր ունի, ոչ
մայր, ոչ էլ եղբայր կամ քոյր: Կարող էք ար-
դեօք տալ նրան ընտանիք և լաւ կեանք: Հար-
ցնում եմ ձեզ որպէս ազնիւ մարդու:

Պապղուն գլխարկաւոր պարոնը նայեց նրան
և բան չասելով շարունակեց խաղը:

— Նա մի տարօրինակ, իրասածի աղջիկ
է, — նորից խօսեց ուսուցիչը, — բայց շատ աւելի
լաւ է քան թէ երևում է: Ես նրա վրա մի որոշ

ազդեցութիւն ունեմ և դրա համար խնդրում եմ
և յոյս ունեմ, որ գործը աւելի հեռու չէք տա-
նի և աղջիկը ինձ կըտաք:

Պապղուն գլխարկաւոր մարդը նորից նայեց
ուսուցչի վրա և կոպիտ ծիծաղելով ասաւ.

— Այ թէ յիմար ես եղել ախպէր: Զէ, ախ-
պէր. կորիր, գլխիցս ուսդ եղիր: Աղջիկը մեզ
հետ կըմնայ:

Ուսուցչի աչքերը այդ անարժան վիրաւո-
րանքից մթնեցին. Տեղն ու տեղը դողաց ու
բունշարժումնյանկարծ առաջընկնելով բռուն-
ցըի մի ուժեղ հարւած տւաւ վիրաւորողի հէնց
երեսին. պարօնի գլխարկը մի կողմ ծուեց, խաղի
փայտը ձեռքից դուրս ընկաւ:

Բարձրացաւ աղմուկի հայնոյանք և բաղմա-
թիւ ոտների արոփիւն: Յետոյ իրարետից լլս-
ւեցին ատրճանակի երկու սուր, կարճ արա-
քոցներ:

Երբ ուսուցիչը մի քիչ ուշքի եկաւ, մէկը
բռնել էր իրան աջ ձեռքից, որից արիւն էր հո-
սում: Բացի այդ, նա նկատեց, որ իր մատները
ջղաճօրէն սեղմում են մի փայլուն դանակի
կոթը: Ոչ մի կերպ չէր կարողանում յիշել, որ-
տեղից էր այդ դանակը:

Այն մարդը, որ նրա ձեռքն էր բռնել, Մօր-
ֆէնէր, կլիտիի հայրը: Նա քարշ էր տալիս ու-
սուցչին դէպի գուռը, բայց ուսուցիչը դիմադ-

րում էր և աշխատում էր արտասանել արիւնո-
տած շըթունքներով.

—Միս:

—Հասկանում եմ, բարեկամ, հասկանում,
ասում էր նրան միստեր Մօրֆէրը: —Նա տանն է:

Եւ միասին փողոց գուրս գնացին: Ճամփին
միստեր Մօրֆէրը պատմեց, որ մի քանի վայր-
կեան առաջ իր մօտ վազեվազ եկել էր Միսն
ու ասել, թէ Սրկադում մէկը ուզում է ու-
սուցչին սպանել, շտապեցէք, օգնութեան հասէք:

Կամենալով մենակ մնալ, ուսուցիչը խոստա-
ցաւ միառժամանակ հանգիստ թողնել դերասա-
նական խմբի կառավարչին, ու, մնաս բարով ա-
սելով նրան, ուղևորւեց շաւով դէպի դպրոցը:
Նա զարմացաւ որ դպրոցի դուռը բաց էր, աւե-
լի ևս զարմացաւ, երբ սենեակը մտնելով՝ այն-
տեղ գտաւ Միսին:

Ոռանց աղջկայ վրա նայելու, նա ուղղակի
մօտեցաւ իր գրասեղանին ու սառը ձայնով ա-
սաւ նրան, որ ինքը զբաղւած է և կամենում է
մենակ մնալ:

Միսը ոտքի ելաւ: Ուսուցիչը նստեց սե-
ղանի մօտ ու երեսը ձեռներով ծածկեց: Երբ
դուխը բարձրացրեց, աղջիկը դեռ ևս կանգնած
էր նրա առջև և նայում էր շեշտակի նրա երե-
սին, անհանգիստ արտայայտութիւնը աչքերում:

—Դուք նրան սպանեցիք, —հարցրեց նա:

—Ո՞չ:

—Չէ որ ես դըա համար տւի ձեզ դանա-
կը, —արագ արտասանեց Միսը:

—Դանակը, —զարմացած կրկնեց ուսուցիչը:

—Այն, դանակը ես տւի: Ես այնտեղ էի,
բիւխարդի տակ, և տեսայ ինչպէս դուք նրան
խփեցիք և յետոյ երկուադ էլ ընկաք: Վայր ընկ-
նելիս, նա դանակը ձեռքից բաց թողեց: Ես այդ
դանակը բռնեցի ձեր ձեռքը խցկեցի: Ինչու չը
սպանեցիք նրան, —շտապ շտապ խօսեց Միսը,
նայելով նրան լայն աչքերով:

Ուսուցիչը լրու և ապշած մտիկ էր տալիս
նրան:

—Այն, —շարունակեց Միսը, —ես վճռել եմ
հեռանալ, փախչել դերասանների հետ: Ինչու:
Նրա համար, որ ես պատահմամբ իմացայ որ
դուք ուզում էք մեր մօտից գնալ և ուսուցիչ
մտնել ուրիշ քաղաքի դպրոցը: Ճշմարիտ է այդ:

— Ճշմարիտ է, —պատասխանեց ուսուցիչը:

— Ուստի և ես, հենց որ լսեցի այդ, իս-
կոյն վճռեցի գնալ դերասանների հետ կամ ու-
տել ահա այս ու մեռնել:

Եւ նա արագ շարժումով իր ծոցից հանեց
տերևների ու ծաղիկների մի կապոց և արտա-
սանեց՝ յուզմունքից խեղդւելով:

— Ոհա այն թունաւոր բոյսերը, որոնք
ձեր ասելով կարող են մարդուն սպանել: Ես

կամ կերթայի այստեղից, կամ կը մեռնէի: Ինձ
համար բոլորը մէկ է: Միայն թէ այստեղ չեմ
մնայ: Այստեղ ես ամենքին ատում եմ: Ամենքն
էլ ինձ ատում են: Ինչի՞ համար, Դնէք էլ ա-
տում էք ինձ: Դուք հօ չէիք գնայ, իմ մօտից,
եթէ նոյնպէս չատէիք ինձ:

Նա ծանը շունչ էր քաշում, և խոշոր պր-
տասուբները վլորւում էին նրա երկար թերթե-
րունքների վրայից. Բայց գոգնոցի անկիւնով
սրբեց նրանց:

— Եթէ ինձ փակէք, — տենդօրէն շարունա-
կեց Միաը, — որ ես գերասանների հետ չը գնամ,
ինքս ինձ կը սպանեմ: Հայրս հօ լինքն իրեն
սպանեց. Ինչու ես չը պիտի նոյնն անեմ:

Ուսուցիչը յիշեց Սմիտի գերեզմանը և դա-
տարկ տեղը նրա կողքին: Նա աչքերը բարձրա-
ցրեց իր առջև կանգնած փոքրիկ կերպարանքի
վրա և բռնելով նրա ձեռքերն և ուղակի նրա
աչքերի մէջ նայելով՝ ասաւ.

— Ոչ, ես քեզ չեմ թողնի, Միա: Գնանք
այստեղից հետու, ընդմիշտ:

Աղջիկը փարեց նրա վզին ու ցնծալով
գոչեց.

— Գնանք... գնանք...

— Բայց միայն այսօր, այսօր, և եթ...

— Օհ, այն, այսօր և եթ...

Եւ ձեռք ձեռքի տւած, նրանք գնացին ճամ-

փով, հէնց այն նեղ ճամփով, որը մի ժամա-
նակ աղջկայ յոգնած ոտիկները բերել էր ու-
սուցչի դռանը:

Նրանց գլխին պայծառ շողում էին աստ-
ղերը: Կարմիր Սարի դպրոցի դռները փակւեցին
նրանց ետևից ընդմիշտ:

անսե մն ցղո իստիւտ յժմ միա քաշը խօֆ
- ո դժ լոնց ցղմաքջուն համրու չափերու թամ
- ական ողբան մասնակիւն աշխար վերու
- առա միջն նարու անձնուր միջյը պայած
- միջքաքափ ցղմանք վըսոյրու վրան վանակ
- ու աշխար աշխար աշխար պայած

Եթէ ին գումար անուղուն այսուհան
- ա Մասուր ու այսուհան անուղուն
- ին ին կը ապահու այսու և բար այսու
- առանց Բազմ ան ապահու ապահու

Առուղի աշխար ապահու ապահու ապահու
- ապահու ապահու ապահու ապահու ապահու
- ապահու ապահու ապահու ապահու ապահու
- ապահու ապահու ապահու ապահու ապահու

Եթէ ին գումար անուղուն այսուհան
- ա Մասուր ու այսուհան անուղուն
- ին ին կը ապահու այսու և բար այսու
- առանց Բազմ ան ապահու ապահու

Ապահու ապահու ապահու ապահու ապահու
- ապահու ապահու ապահու ապահու ապահու

Ապահու ապահու ապահու ապահու ապահու
- ապահու ապահու ապահու ապահու ապահու

Ապահու ապահու ապահու ապահու ապահու
- ապահու ապահու ապահու ապահու ապահու

- ա մասնակիւն ա մասնակիւն մասնակիւն Վ 1906, 1907 կի 1908 թ. թ. օսման—ցա
- ազնա ողբան մասնակիւն մասնակիւն Վ 1906, 1907 կի 1908 թ. թ. օսման—ցա

Լոյս տեսան հետեւեալ գրեոյկները .ա մասնակիւն ա մասնակիւն Վ 1906, 1907 կի 1908 թ. թ. օսման—ցա ա մասնակիւն մասնակիւն Վ 1906, 1907 կի 1908 թ. թ. օսման—ցա

III Երեխայի կրթութիւնը մինչև 6 տարեկան հասակը—Հենրիկ Վերնիկի, թարգմ. Ստ. Լիսիցեանի, 25 կ.

II Երեխայի քանը—Ալիրենիուսի, թարգմ. Ստ. Լիսիցեանի, 15 կ.

III Երեխայի աղատագրութիւնը—Կ. Հ. Վենտցելի, Մեծերն ու փոքրերը—տիկ. Խսահակսէնի թարգմ. Ստ. Լիսիցեանի, 15 կ.

IV Սովորութիւնները, նրանց նշանակութիւնն ու կրթութիւնը—Կ. Ելսիցկու, թարգմ. Մ. Աղ. և Ստ. Ս. 15 կ.

V Պարզեները ու պամահմանը ընտանեկան դաստիարակութեան մէջ—Ֆեսենկօի, թարգմ. Մ. 15 կ.

VI Որտեղից է աշխարհ եկել քո փոքրիկ եղբայրը—Գալանդառէրի, թարգմ. ա. Հ. Թոփչիանի, Ծանօթացրէ կեանքի ծագման հետ—տիկ. Սելմերի, թարգմ. Ստ. 15 կ.

VII Հնտան. դաստիարակութեան նպատակները և հիմունքները.—Պ. Կապտերեկի, թարգմ. Միս. Աս. 15 կ.

VIII Իսչն է հիտաքրքրում և զարգացնում մանկան—Ակսէլ Արստալի, թարգմ. Ստ. Լիսիցեանի, 15 կ.

IX Մանուկների աշխատանքն ընտանիքում—Ակսէլ Արստալի, թարգմ. Մ. Ասիլեանցի, 15 կ.

X Տղան և աղջիկը անցողական շրջանում—Բուլի և Նելսէնի, թարգմ. Ստ. Լիսիցեանի, 10 կ.



«Հ Ա. Ս Կ Ե Բ Ի Հ Ա Հ Ա Ր Ա Ր Ո Կ Ո Ւ Թ Ի Կ Ն Ե Ր

1.	Հեղ. Մելիք-Հայկազեան,	Քսան օր գետնի տակ	20	կ.	
2.	Օսկար Ուայլդ,	Պրինցն ու ծիծեռնակը	20	»	
3.	Ստ. Լիսիցեան.	Քաջ ճամփորդներ	25	«	
4.	Աթ.	Խնկոյեան.	Գիւղացին ու արջը	25	»
5.	Ստ.	Լիսիցեան.	Քաջ զինուորներ, պիհս.	8	»
6.	Ռ.	Պատկանեան.	Չախու	20	»
7.	Ստ.	Լիսիցեան.	Սոված Գայլը	10	»
8.	Կլաւդիա	Լուկաշեիչ,	Քեռի Մկօ	20	»
9.	Կարլ Էվալդ.	Երկիրն ու զիսաստղը	12	»	
10.	Կապուան.	Ֆիօրէ փերին:	Ասեղ	12	»
11.	Իւանովիչ.	Աւոենց Ստեփանը	20	»	
12.	Կ.	Լուկաշեւիչ.	Ծաղիկների մէջ.	12	»
13.	Աթ.	Խնկոյեան.	Աղւէսն ու արջը	20	»
14.	Կենդանիների	գոյները	15	»	
15.	Բրետ Հարտ.	Մլիս		—	

Գինն է 12 կօդ.

Դիմել՝ գրավաճառներին, կամ Թիֆլիս՝ Редакція
“АСКЕРЪ”